Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/11Ս» ծածկագրով բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 15.08.2024թ. ժամը 11:00: ավարտ՝ 28.08.2024թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Վահե Աչոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)
Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Վահրամ Նորեկյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային համակարգող ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Թադևոս Կիլիչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Հրաչ Աբրահամյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային համակարգող ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Լուսինե Աբովյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԳԱՊ)՝ Վահե Աչոյանը 2024 թվականի օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 05-ը գտնվել է արձակուրդում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետը հանձնաժողովի կողմից նիստը համարվեց իրավազոր և սահմանված կարգով վարվեց հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված **«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/11Ս»** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	**«Սպանդարյան Ասֆալտ» ՍՊԸ**	ՀՀ Շիրակի մարզ, Անի (Մարալիկ), Հ.Շահինյան12	(+374) 94 - 30 – 80 – 02 Nadezhda.gevorgyan@mail.ru
2	**«Փայլք» ՍՊԸ**	ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր Վան փ., տ.1	(+374) 98 - 69 – 74 – 84 paylq@mail.ru
3	**«Մոստ Կոնտրակտ» ՍՊԸ**	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Եղվարդի խճ.16/1	(+374) 98 - 68 – 00 – 00 mostcontract@mail.ru

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Պատվիրատուին ուղղված հարցումներ և դրանց տրված պարզաբանումներ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: «Սպանդարյան Ասֆալտ» ՍՊ, «Փայլք» ՍՊ, «Մոստ կոնտրակտ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատվում է հրավերով սահմանված պահանջներին բավարարող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
Մասնակցի անվանումը	**ՉԱՓԱԲԱԺԻՆ 1** **Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ156+600 Ձորագետ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքներ**	

	Նախահաշվային գին 105 774 500 ՀՀ դրամ	
«Մոստ կոնտրակտ» ՍՊԸ	61 600 000	73 920 000
«Սպանդարյան Ասֆալտ» ՍՊԸ	79 600 000	95 520 000
«Փայլք» ՍՊԸ	87 560 000	105 072 000

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից **«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/11Մ»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մոստ կոնտրակտ» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել՝ պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ -0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Աչոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Խաչատրյան _____

Վ. Նորեկյան _____

Հ. Աբրահամյան _____

Թ. Կիլիչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. Աբովյան _____